ՎԱՀԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՔՈՐՈՇՈՒՄԸ 1194-1219 ԹԹ. ԿԻԼԻԿԻԱ-ԱՆՏԻՈՔՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

1194-1219 թթ. կիլիկիա-անտիոքյան հակամարտությունն ուղեկցվում էր ոչ միայն զինված բախումներով, այլ նաեւ գործուն դիվանագիտական պայքարով, որում ներգրավված էր նաեւ պապական Հռոմը՝ ի դեմս կաթոլիկ հոգեւորականության: Սա պատահական չէր, քանի որ Երուսաղեմի գրավումից հետո (1099 թ.) պապերն ասպիճանաբար ուժեղացնում էին իրենց ազդեցությունը Լատինական Արեւելքում եւ ընդհանրապես տարածաշրջանում՝ կապված Երուսաղեմի թագավորների անկում ապրող հեղինակության ու տեղական քրիստոնեական եկեղեցիների կողմից պապական գերիշխանության ճանաչման հետ:

Լատինական Եկեղեցու փոխհարաբերությունները տեղական եկեղեցիների հետ ուսումնասիրության այլ հարթություն է, սակայն իրավիճակի պարզաբանման համար նշենք մի քանի կարեւոր փաստ. նախ կրոնն ու քաղաքականությունը միջնադարում այնքան կապված են եղել իրար հետ՝ «եկեղեցին բարոյական խոշոր հասպատություն է, ... որի պտույտները գրեթե միշտ կատարվել են քաղաքական ելեւէջների շրջանակի մեջ...»[1]:

Հայ Եկեղեցին նույնպես զարգանում էր տարածաշրջանում ընթացող գործընթացների ազդեցության տակ եւ, պահպանելով սեփական հավատո հանգանակը, մտնում է Հռոմի հետ սերտ հարաբերությունների մեջ: Մի շարք բարձրաստիճան հոգեւորականներ նույնիսկ կողմ էին եկեղեցիների միությանը: Նման դատողություններ հատկապես արել է Տարսոնի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Լամբրոնացին իր բազմաթիվ թղթերում եւ նամակներում՝ խոսելով բոլոր քրիստոնեաների միասնության, կաթոլիկ հոգեւորականության բարեխղճության մասին[2]:

Ասվածի ճշմարտացիության ամենանշանակալի ապացույցն այդ ժամանակահատվածում ծնված «Դաշանց թուղթ» կոչվող փաստաթուղթն է, որն ըստ ավանդության, գրել ու կնքել են Կոստանդինոս կայսրն (306-337 թթ.) ու Սեղբեստրոս պապը (314-335 թթ.)՝ մի կողմից, Տրդատ թագավորն (298-330 թթ.) ու Գրիգոր Լուսավորիչը (302-337 թթ.)՝ մյուս կողմից: Հատկանշական է, որ պապն իր Լուսավորչին տվել է Վրաց, Աղվանից եկեղեցիների, Անտիոքի, Երուսաղեմի եւ Ալեքսանդրիայի պատրիարքների ձեռնադ-

1 **Ն. Ադոնց**, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 153:

2 Տես **ST. NERSES LE GRAND**, *Recueil des historiens des croisades/RHC/, Doc. armeniens,* t. 1, P., 1869, էջ 569-578, 595-596. նաեւ ,Ներսէսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի ստեղծագործութիւնք. Ընտիր մատենագիրք, Թուղթ առ Լեւոն արքայ, Վենետիկ, 1865, էջ 207-248:

ության իրավունքը[3]: Այստեղ դժվար չէ նկատել Լատինական Արեւելքում տիրապետող դիրքի հասնելու հայկական ցանկությունն ու Կոստանդինոսի, Սեղբեստրոսի, Տրդատի ու Լուսավորչի անունների մարմնավորումը ժամանակակիցներին հայտնի Ֆրիդրիխ Շիկամորուսի (1152-1190 թթ.), Իննոկենտիոս III-ի (1198-1216 թթ.), Լեւոն II-ի (1198-1219 թթ.) եւ Գրիգոր Ապիրատի (1194-1203 թթ.) անունների հետ[4]:

Այս փաստաթուղթը կոչված էր արդարացնելու այն փոփոխությունները, որոնք սպասվում էին Հռոմի հետ փոխհարաբերությունների արդյունքում: Ներսես Լամբրոնացին համոզված էր, որ եկեղեցական արարողությունների մեջ առանձին փոփոխությունները լուրջ անհանգստության պատճառ չեն կարող դառնալ[5]: Կարծես հենց նման դրամադրություններն են դրդել Նիկիտա Քոնիատին գրելու, որ հայերն ու գերմանացիները ունեն շատ ընդհանուր հերետիկոսական ուսմունքներ, եւ, շեղվելով ճշմարիտ ուղուց, ինչպես օրենք պահպանում են բաներ, որոնք ուղղափառ քրիստոնյաների կողմից մերժվում են[6]:

Նման իրավիճակում էլ սկսվում է հերթական կիլիկիա-անտիոքյան հակամարտությունը, որի մեկնակետ կարելի է համարել 1193 թ. Լեւոն II-ի կողմից Անտիոքի դուքս Բոհեմունդ III-ին (1163-1201 թթ.) գերելը[7]: Վերջինից պահանջում են գնալ մի շարք զիջումների՝ այդ թվում նաեւ հանձնել Անտիոքը: Այդ նպատակով Անտիոք է ուղարկվում հայկական զորաջոկատ, որը պահանջում է քաղաքի Ս. Հիլարիոս եկեղեցին անվանափոխել Ս. Սարգսի անունով, որն ըմբոստություն է առաջացնում ֆրանկ բարոնների մեջ[8]: Այս դավանաբանական խնդրի կտրուկ սրումն էլ ի հայտ է բերում երկու ժողովուրդները բաժանող գիծը, քանի որ այն կնշանակեր լատինական ծեսի փոխարինում հայկականով: Եւ հենց այստեղ է, որ Անտիոքի պաշտպանությունն իր վրա է վերցնում պատրիարք Էմերի Լիմոժացին (1141-1196 թթ.): Նա ժողով է գումարում Ս. Պետրոս Մայր տաճարում ու ձեւավորում քաղաքային կոմունա՝ ինքն անձամբ դառնալով նրա ոգին: Նրա խորհրդով քաղաքի բնակչությունն իշխան Ռայմունդին կարգում է դքսության խնամակալ եւ վանում հայկական ուժերն Անտիոքից[9]: Սա, չնայած այն բանին, որ Բոհեմունդ III-ն ու պատրիարքն ունեին կոնֆլիկտ՝ կապված դուքսի՝ Թեոդորա Կոմնենոսից ապօրինի բաժանվելու եւ անբարո Սիբիլայի հետ ամուսնանալու հետ[10]: Սակայն երբ խոսքն Անտիոքի հայկականացման մասին էր, լատին պատրիարքը հավատարիմ է մնում իր կոչմանը:

---

3 Մանրամասների համար տես **Donat Vernier** , *Histoire du Patriarcat arménien catholique*, P., 1891, էջ 85-107:

4 Տես **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 1, Երեւան, 1955, էջ 65:

5 Տես **Գ. Գրիգորյան**, Հասարակական-փիլիսոփայական միտքը հայկական Կիլիկիայում, Երեւան, 1979, էջ 159:

6 Տես **Никита Хониат**, *История*, т. 2, СПБ, 1862, էջ 64:

7 Տես **Смбат Спарапет**, *Летопись*, пер. **А. Галстян,** Е., 1974, էջ 112:

8 Տես **"L'ESTOIRE DE ERACLES"**, *RHC, Historiens occidentaux,* t. 2, P., 1859, էջ 209:

9 Տես **"La CONTINUATION DE GUILLAUME DE TYR (1184-1197)"**, par **M. Morgan**, P., 1982, էջ 167-169:

10 Տես **WILLIAM DE TYR**, *Historia rerum in pertibus transmarine gestarum*, www.thelatinlibrary.com/williamtyre/22html.

Կիլիկիա-անտիոքյան հակամարտությունը նորից բորբոքվեց 1201 թ., երբ մահացավ Բոհեմունդ III-ը: Դեռեւս կենդանության օրոք նա համաձայնել էր Անտիոքի գահը հանձնել հայկական արքունիքում ծնված իշխան Ռայմունդի մանկահասակ զավակ Ռայմունդ-Ռուբենին[11]: Բայց Բոհեմունդ III-ի կրտսեր որդի Բոհեմունդ IV-ն Անտիոքի ֆրանկամետ տարրի կողմից հրավիրվեց գահակալելու դեռ հոր մահվան նախօրյակին[12]: Այս իրողության հետ չէր կարող համակերպվել Ռայմունդ-Ռուբենի հովանավոր Լեւոն արքան, որը եւ դիմեց բոլոր հնարավոր միջոցներին՝ հարցն իր օգտին լուծելու համար:

Այս հակամարտության կրոնական կողմը հատկապես սրվում է Անտիոքի մեծ ու ազդեցիկ հունական համայնքի առկայության[13] պայմաններում: Հունական համայնքի լուրջ ազդեցության մասին խոսում է այն փաստը, որ Ուսամա իբն Մունկիզի հաղորդմամբ մոտ 1130-1140-ական թթ. Անտիոքի քաղաքագլուխը Թեոդոր իբն աս-Սաֆինն էր (Սաֆիետոս), որը քաղաքում ուներ հսկայական ազդեցություն[14]: Ու քանի որ Լեւոնին պաշտպանում էր Անտիոքի հայ համայնքը, ապա պարզ է, որ հույն համայնքը պետք է բռներ Բոհեմունդ IV-ի կողմը, որի միջոցով վերջինս ցանկանում էր վերականգնել քաղաքի հունական պատրիարքությունը: Նման իրավիճակն ստիպում է նոր պատրիարք Պետրոս Անգուլեմացուն (1196-1208 թթ.) անցնելու հայերի կողմը եւ ընդդիմանալու Բոհեմունդին[15], չնայած նա 1201 թ. ճանաչել էր վեջինիս իշխանությունը: Բայց Իննոկենտիոս III Պապը, այնուամենայնիվ, փորձեց նրան պահել չափի մեջ[16]:

Պետրոս Անգուլեմացու հայկական կողմնորոշումը պայմանավորված չէր միայն հունական տարրի առկայությամբ: Նշանակալի դեր ուներ նաեւ 1198 թ. լատին ծիսակարգով Լեւոնի թագադրումն ու պապի գերիշխանության ճանաչումը: Չմանրամասնելով թագադրության եւ դավանաբանական հարցերը՝[17] նշենք միայն, որ պապի գերիշխանությունը ճանաչելու առումով Լեւոնը կատարեց ընդամենը բանավոր զիջումներ, որը, սակայն, թույլ տվեց պահպանել լատինների հետ կնքված քաղաքական դաշինքը[18]: Դրա պտուղները երեւացին շատ շուտով, երբ Անտիոքի ժառանգության հարցը Լեւոնը վստահեց պապական կուրիայի իրավարարությանը: Այդ մասին վկայում են պապի հետ փոխանակված նամակագրությունն ու նրա պատվիրակների գործունեությունը[19]: Պապի առաջին երկու նվիրակները՝ Սոփրետոս Դրաքսիդի եւ Պետրոս Մարակելա կարդինալները[20], Արեւելք ժամանեցին համապատասխանաբար 1202 թ. նոյեմբերին ու 1203

11 Տե՛ս **Смбат Спарапет**, *Летопис*, էջ 114:

12 Տե՛ս **René Grousset**, *Histoire des croisades et du rayaume franc de Jnrusalem*, t. 3, P., 1936, էջ 246:

13 Տե՛ս **Claude Cahen**, *Le sceaude de Thierri de Barneville, duc d'Antioche,Revue numismatique*,6e série, t. 26,1984, էջ 227:

14 Տե՛ս **Усама Ибн Мункиз**, *Книга назидания,* М., 1958, էջ 217:

15 Տե՛ս **«L'ESTOIRE DE ERACLES»**, *RHC, Historiens occidentaux*, t. 2, էջ 313:

16 Տե՛ս **René Grousset**, *Histoire des croisades et du rayaume franc de Jnrusalem*, t. 3, էջ 251:

17 Տե՛ս այդ մասին մանրամասներ տես **Ղ. Ալիշան**, Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 446-478. նաեւ **Г. Микаелян**, *История киликийского армянского государство*, Е. 1952, էջ 155-164:

18 Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, Երեւան, 2005, էջ 338:

19 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, էջ 478, 491-496:

20 Հռոմեական կուրիայի յուրաքանչյուր կարդինալ պայմանական ամրագրվում էր Հռոմի ինչ-որ եկեղեցու եւ անվանվում այդ եկեղեցու սուրբ հովանավորի անունով:

թ. մարտին[21]: Կողմերի միջև հաշտություն հաստատելու ջանքերը արդյունք չտվեցին, քանի որ Սոփրեդոսի ու Պետրոսի միջև նույնպես առկա էր տարաձայնություն. Սոփրեդոսն առաջարկում էր բանադրել Բոհեմունդին անզիջողականության համար, իսկ Պետրոսը դեմ էր դրան եւ պաշտպանում էր վերջինիս շահերը: Ամբողջությամբ Լեւոնի կողմն անցնելու համար Իննոկենտիոս III-ին խանգարում էր 1191 թ. հայերի կողմից նախկին տաճարական Բաղրաս ամրոցի գրավման փաստը: Տաճարականների հարցը սերտորեն կապված էր Անտիոքի ժառանգության հետ, քանի որ նրանք Բոհեմունդի դաշնակիցներ էին, ուստի այն լուծելու համար պապն առանձին դատավորներ կարգեց՝ ի դեմս Վալանիայի եւ Բիբլոսի եպիսկոպոսների:

Դրաքսիդին եւ Մարակելան այդպես էլ գործը չավարտեցին եւ 1205 թ. սկզբին բազմաթիվ ասպետների հետ անցան Կոստանդնուպոլիս[22], որտեղ Պետրոս Մարակելան սկսեց զբաղվել խաչակրության ակտիվ քարոզով[23]: Պապը ստիպված էր նշանակելու նոր քննիչների, որոնք էին բարոններ Բերտոլդը, Ֆորավալեն եւ Լուչետտոյի ու Թաբոր լեռան վանահայրերը: Սրանց գործունեության մասին մեզ գրեթէ ոչինչ հայտնի չէ[24], բայց դատելով Անտիոքի ու Կիլիկիայի հետագա զինված բախումներից, կարելի է եզրակացնել, որ նրանք եւս չկարողացան խաղաղություն հաստատել կողմերի միջև:

1205 թվականը նշանակալի էր նաեւ նրանով, որ Հռոմի պապը բանադրեց արդեն Լեւոնին՝ Բաղրասը տաճարականներին վերադարձնելու նրա կոչերին չարձագանքելու համար[25]:

Անտիոքի լատին տարրը աստիճանաբար Պետրոս Անգուլեմացու գլխավորությամբ ավելի կոշտ դիրքորոշում է որդեգրում Բոհեմունդի դեմ, որին նա հակադարձում է հունական տարրի ազատության ընդարձակմամբ: 1206/07 թթ. պատրիարքի աթոռը Բոհեմունդը հանձնում է հույն Սիմեոն III-ին: Իննոկենտիոս պապը 1207 թ. մարտի 4-ին սպառնում է բանադրել իշխանին ու նրա կողմնակիցներին, եթե նրանք շարունակեն սատարել հույն պատրիարքին: Սակայն այս նախազգուշացումն արդյունք չտվեց եւ 1208 թ. մարտին պապը հրապարակեց բանադրանքի կոնդակ[26]:

Իր հերթին Պետրոս Անգուլեմացին 1208 թ. հիվանդախնամների միաբանության հետ ապստամբություն է բարձրացնում՝ Անտիոքի դարպասները բացելով Լեւոնի եւ Ռայմունդ-Ռուբենի առաջ: Նա Ս. Պետրոսի տաճարում Ռայմունդ-Ռուբենին հռչակում է նաեւ Անտիոքի դուքս: Բայց այս ձեռնարկը շուտով ավարտվում է անհաջողությամբ, եւ Բոհեմունը տաճարականների հետ քաղաքից վտարում է հայերին[27]:

Հաղթանակից հետո Բոհեմունդ IV-ը Պետրոս Անգուլեմացուն նետում է բանտ, որ-

21 Տե՛ս **Б. Бойчук**, *Амори II де Лузинян*, Од. 2005, www.templiersinfo.ru/amori2deluzinyan/.

22 Տե՛ս **Жоффруа де Виллардуэн**, *История завоевания Константинополя*, М. 2008, էջ 108. եւ ,LÆSTOIRE DE ERACLESե, RHC, Historiens occidentaux, т. 2, էջ 287:

23 Տե՛ս **Жоффруа де Виллардуэн**, *История завоевания Константинополя*, էջ 123:

24 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, էջ 496:

25 Տե՛ս **René Grousset**, *Histoire des croisades et du rayaume franc de Jmrusalem*, т. 3, էջ 253:

26 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, էջ 498:

27 Տե՛ս **René Grousset**, *Histoire des croisades et du rayaume franc de Jmrusalem*, т. 3, էջ 255-257:

տեղ 1208 թ. հուլիսի 8-ին նա ծարավից մահանում է[28]: Ըստ Սմբատ Սպարապետի՝ Բոհեմունդն իր մարդկանց բանտ է ուղարկում՝ առաջարկելով պատրիարքին՝ իրեն ճանաչել որպես դուքս եւ ազատ արձակվել, սակայն նա մերժում է նրանց ու մահանում ծարավից եւ սովից[29]:

Սրանից հետո Բոհեմունդն սկսում է բացահայտորեն արհամարհել պապի սպառնալիքներն ու անթիվ բանադրանքները: Նա ոչ միայն չի ճանաչում նրա նշանակած (1209 թ. մարտ) նոր պատրիարք Պետրոս Լաչեդոնացուն, այլեւ պապի այն հորդորներին, որ դուքսը չխանգարի Լաչեդոնացուն զբաղեցնել իր աթոռը, պատասխանեց հույն պատրիարքի ներկայության երկարաձգմամբ մինչեւ 1213 թ.: Նա նույնիսկ սկսեց չարձագանքել պապի նամակներին[30]: Դա ստիպեց Ինոկենտիոս III-ին 1210 թ. փասատացի ճանաչել Ռայմունդ-Ռուբենի իրավունքները՝ նրան թագ ուղարկելով[31]: Պապը հարցը խաղաղ լուծելու եւս մեկ ապարդյուն փորձ է անում եւ Արեւելք ուղարկում իր նվիրակ Սիկար Կրեմոնացուն[32]:

Դժվար չէ կռահել, որ այս պայմաններում նոր պատրիարքը նույնպես անցնելու էր Լեւոնի կողմը եւ հարելու 1216 թ. Բոհեմունդ IV-ի դեմ կազմակերպվող հերթական դավադրությանը: Դավադիրների գլուխ Անտիոքի սենեսկալ Աքարիան 1216 թ. մարտին քաղաքի դարբասները բացում է հայերի առջեւ[33]: Պետրոս Լաչեդոնացին մեծ շուքով Ռայմունդ-Ռուբենին օծում է իշխան: Ինոկենտիոսին փոխարինած Հոնորիոս III պապը (1216-1227 թթ.) չի փոխում Հռոմի քաղաքականությունը եւ 1217 թ. հուլիսի 29-ի հրովարտակով Անտիոքի ազնվականությանը կոչ է անում պաշտպանել Ռայմունդ-Ռուբենին[34]: Սակայն իրադարձություններն այլ կերպ են դասավորվում, եւ 1219թ. Բոհեմունդ IV-ը վերականգնում է իր իշխանությունը՝[35] վերջ դնելով այս հակամարտությանը: Պետրոս Լաչեդոնացու մահը (1217 թ.) ,փրկեցե նրան իշխանի վրեժխնդրությունից:

Սրանով, սակայն, չավարտվեց դավանաբանական պայքարը Անտիոքում, որ կար դքսության գոյության ողջ ընթացքում:

Եթե փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչու՞ էր ի վերջո Լեւոն II-ը դիմել Լատինական եկեղեցու իրավարարությանը, ապա պետք է նշենք, որ ԺԲ. դարի վերջին Լատինական Եկեղեցին Արեւելքում ներկայանում էր ոչ միայն բազմաթիվ պատրիարքություններով ու մենաստաններով, այլ նաեւ արդեն կայացած հոգեւոր-ասպետական միաբանություններով, որոնք իրենցից հզոր զինական ուժ էին ներկայացնում: Ունենալով բազմաթիվ արտաքին ու ներքին խնդիրներ՝ Լեւոնը չէր կարող այդ ամենը հաշվի չառնել

28 Տե՛ս «L'ESTOIRE DE ERACLES», *RHC, Historiens occidentaux*, т. 2, p. 313-314. նաեւ «LES GESTES DES CHIPROIS», *RHC, Documents arméniens*,. т. 2, P. 1906, էջ 664:

29 Տե՛ս **Смбат Спарапет**, *Летопись*, էջ 121:

30 Տե՛ս **René Grousset**, *Histoire des croisades et du rayaume franc de Jnrusalem*, т. 3, էջ 257-259:

31 Տե՛ս **Смбат Спарапет**, *Летопись*, էջ 122:

32 Տե՛ս **Ղ. Ալիշան**,Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, էջ 499-500:

33Տե՛ս «LES GESTES DES CHIPROIS», *RHC, Documents arméniens*, т. 2, էջ 665. նաեւ **Смбат Спарапет**, *Летопись*, էջ 122-123:

34 Տե՛ս **René Grousset**, *Histoire des croisades et du rayaume franc de Jnrusalem*, т. 3, էջ 260-263:

35 Տե՛ս «LES GESTES DES CHIPROIS», *RHC, Documents arméniens*, т. 2, էջ 665, 670:

եւ դուրս գալ Հռոմի դեմ: Ուստի նրա հիմնական խնդիրը Լատինական Եկեղեցու նպաստավոր դիրքորոշման ապահովումն էր, առավել եւս, որ Բոհեմունդ IV-ը խնդիրներ ուներ Հռոմի հետ: Բայց հարցի էությունն անընդհատ ավելի էր բարդանում, քանի որ արագ փոփոխվող իրադրությունը ստիպում էր պապական Հռոմին վարելու իր սեփական դիվանագիտական խաղը՝ անցնելով մեկ այս, մեկ այն կողմը: Երկու կողմերի վրա էլ իր իշխանությունը տարածելու համար, նա հաճախակի էր դիմում ,ամենահաս բանադրանքին՝ թույլ չտալով կողմերից որեւէ մեկի լիակատար հաղթանակը: Այս ամենը պարզ էր քաղաքական այնպիսի տաղանդների համար ինչպիսիք էին Լեւոնը եւ Բոհեմունդը, սակայն պայմանները ստիպում էին նրանց հարմարվելու իրականությանը եւ փնտրելու հարցի կարգավորման նոր միջոցներ: